

Հավելված 2

ՀՀ Կրթության և գիտության նախարարի
23. 11. 2007թ. N1153-Ա/ք հրամանի

Մաթեմատիկա

**Հանրակրթական հիմնական դպրոցի
առարկայական չափորոշիչներ և
ծրագրեր**

Հեղինակներ՝

Համլետ Միքայելյան

Սարիբեկ Հակոբյան

Արամ Հակոբյան

Լավրենտի Մաթևոսյան

Նարինե Բայաթյան

Գևորգ Հակոբյան

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 23. 11. 2007թ. N1153-Ա/ք հրամանով հաստատված հիմնական դպրոցի մաթեմատիկայի չափորոշիչների և ծրագրերի վերջնական տարբերակները կազմվել են 2005 թվականի նոյեմբերի 25-ի N682-Ա/Ք հրամանի համաձայն որպես փորձնական հաստատված և շուրջ մեկ տարի գործածության մեջ գտնվող «Հանրակրթական դպրոցի մաթեմատիկա առարկայական չափորոշիչի և ծրագրի» հիման վրա:

Նկատի ունենալով ավագ դպրոցի նախատեսվող բարեփոխումները, ավագ դպրոցի ընդհանուր և տարբերակված հոսքերի՝ շրջանառության մեջ գտնվող չափորոշիչները և ծրագրերը խնդրում ենք շարունակել դիտել որպես նախագիծ և դրանց բարելավմանն ուղղված դիտողություններն ու առաջարկությունները ներկայացնել ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ՝ Երևան, Ս Վրացյան փող. 73 կամ cfep@arminco.com հասցեներով:

Վաճառքի ենթակա չէ:

«Մաթեմատիկա» ուսումնական առարկայի

չ ա փ ո ռ ը ի չ

(1-4, 5-6 դասարաններ)

Բ ա գ ա տ ռ ա գ ի Ր

Մաթեմատիկայի առարկայական չափորոշի մշակման համար հիմք են ծառայել հանրակրթության պետական կրթակարգում ամփոփված հիմնական սկզբունքները և միջնակարգ կրթության պետական չափորոշի պահանջները:

Մաթեմատիկայի չափորոշիչը, սույն բացատրագրի հետ մեկտեղ, ներառում է՝

- *մաթեմատիկայի հայեցակարգը*, որում ներկայացված են այն հարցադրումներն ու հիմնադրույթները, որոնք կողմնորոշիչ դեր ունեն կրթության բովանդակության մեջ մաթեմատիկայի գործառույթները որոշելու և կրթության կազմակերպմանն անհրաժեշտ նյութերը՝ չափորոշիչները, ծրագրերը, ձեռնարկները մշակելու համար,
- *առարկայի ուսումնական նպատակներն* ըստ կրթական աստիճանների (տարրական դպրոցի և հիմնական դպրոցի V-VI դասարանների համար),
- *առարկայի բովանդակային պարտադիր միջուկը* (հենքային բովանդակությունը) տարրական դպրոցի և հիմնական դպրոցի V-VI դասարանների համար՝ ըստ բովանդակային հիմնական գծերի,
- *ուսումնական գործունեության տեսակները*, որոնք ուսուցման գործընթացում ըստ նպատակահարմարության կարող են ընտրվել և կիրառվել ուսուցչի կողմից,
- *սովորողների պատրաստվածությանը* (գիտելիքներ, կարողություններ և հմտություններ) *ներկայացվող պահանջների և արժեքային համակարգի նկարագրությունները* ըստ կրթական աստիճանների (տարրական դպրոցի և հիմնական դպրոցի V-VI դասարանների համար), ընդ որում՝ գիտելիքներին, կարողություններին և հմտություններին վերաբերող պահանջները ներկայացված են երեք՝ Ա, Բ, Գ խմբերով, որոնք համապատասխանում են՝ Ա – *նվազագույն*, Բ – *միջին*, Գ – *բարձր* պատրաստվածությանը,
- *ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման կարգը*, որում հստակեցվում և որոշակիացվում են գնահատման «10» միավորային սանդղակը, աշակերտների գրավոր աշխատանքները և բանավոր հարցումները ստուգելու, ընթացիկ և կիսամյակային գնահատումներ կատարելու սկզբունքները,
- *առաջարկվող գրականության ցանկը*:

«Մաթեմատիկա » ուսումնական առարկայի

Հայեցակարգ

1. «Մաթեմատիկայի» կրթական նշանակությունը

«Մաթեմատիկան» առանցքային դեր է ունեցել բոլոր կրթական համակարգերում, ինչը պայմանավորած է հետևյալ գործոններով.

- Մաթեմատիկական մտքերը հետևողական են և ունեն կոռ կառուցվածք: Այդ պատճառով մաթեմատիկայի միջոցով հնարավոր է ձևավորել և զարգացնել աշակերտների տրամաբանական և ալգորիթմական մտածողությունը:
- Մաթեմատիկական կրթության դերը պայմանավորված է գործնական-կիրառական նշանակությամբ: Այն անհրաժեշտ է մյուս ուսումնական առարկաների դասավանդման համար:
- Մաթեմատիկան պարունակում է հսկայական կրթական ներուժ. նպատակին հասնելու համար պահանջվող հետևողական և լարված աշխատանքի անհրաժեշտությունը կարող է նպաստել երեխայի հոգևոր աշխարհի ձևավորմանը, մաթեմատիկայի միջոցով կրթությունը կարող է հաջողությամբ նպաստել նաև սովորողի իմացական ոլորտի և կամային ու անհատական հատկանիշների ձևավորմանն ու զարգացմանը:
- Մաթեմատիկայի դասավանդումը մեծապես կարող է նպաստել երեխայի լեզվամտածողության զարգացմանը: Մաթեմատիկական տարրի հիմնարար մասնակցությունը ենթադրում է նաև մայրենի լեզվի մեջ նրա համապատասխան մասնակցությունը:
- Մաթեմատիկական մեծությունների միջև եղած ներքին խոր ու անսպասելի օրինաչափությունները կարող են ծառայել որպես աշխարհի գեղագիտական ընկալման և անձի գեղագիտական դաստիարակության հզոր միջոց:
- Մաթեմատիկայի դասավանդումը հնարավորություն է ստեղծում սովորողներին հաղորդակից դարձնելու ազգային և համամարդկային արժեքներին: Մշակույթի, տնտեսության, սպորտի և այլ բնագավառներում ստացած ցուցանիշների արտահայտումը մաթեմատիկական միջոցներով, զանազան միջոցառումների ընթացքում կատարվող համեմատությունները հնարավորություն են տալիս մաթեմատիկայի դասավանդման ընթացքում լայնորեն ներկայացնելու երկրների, ժողովուրդների, անհատների նվաճումները, ինչը մեծապես ազդում է անձի՝ ինչպես ազգային-հայրենասիրական զգացմունքների, այնպես էլ առանձին մարդկանց և ժողովուրդների նկատմամբ հարգանքի ձևավորմանը:

2. Մաթեմատիկայի ուսուցման նպատակները

- աշակերտների մոտ ձևավորել լեզվատրամաբանական և ալգորիթմական մտածողություն,
- աշակերտի մոտ ձևավորել և զարգացնել կռահելու կարողություն,
- սովորեցնել աշակերտներին ձեռք բերած գիտելիքները և կարողությունները կիրառել տարբեր գործնական խնդիրներ լուծելիս,
- զարգացնել աշակերտի երևակայությունը, ուշադրությունը, դիտողականությունը, աշխատասիրությունը, նպատակասլացությունը, համբերությունը, հանդուրժողականությունը,

3. «Մաթեմատիկա » առարկայի դասավանդման հիմնական սկզբունքները «Մաթեմատիկա» առարկայի դասավանդման հիմքում դրվում են հետևյալ սկզբունքները.

- Ազգային լավագույն ավանդույթների պահպանում և խորացում,
- Համապատասխանեցում արևմտյան կրթական չափանիշներին և չափորոշիչներին,
- Մաթեմատիկայի ուսուցման և «Մաթեմատիկայի» դասավանդման միջոցով սովորողի կրթության ներդաշնակ զուգակցում,
- Մաթեմատիկական կրթության ուղղորդում դեպի մարդը՝ հումանացում,
- Մաթեմատիկական կրթության անհրաժեշտություն բոլոր սովորողների համար,
- Յուրաքանչյուր աշակերտի համար հասանելիության ապահովում,
- Առարկայի ուսուցում՝ սովորողների ակտիվ մասնակցությամբ, մաթեմատիկական գիտելիքների և դրանց կիրառության փորձառության ձեռքբերմամբ:
- Մաթեմատիկայի դասավանդման ընթացքում դիդակտիկայի սկզբունքների պահպանում:

4. «Մաթեմատիկա» առարկայի բովանդակությունը

Մաթեմատիկայի ուսուցումն իրականացվում է հետևյալ բովանդակային գծերով՝ թվաբանություն, մեծություններ, երկրաչափության տարրեր, հանրահաշվի տարրեր, տրամաբանության և ինֆորմատիկայի տարրեր:

Թվաբանության բովանդակային գիծը նպատակ ունի ձևավորել և ամբողջացնել սովորողների՝ բնական թվերի, սովորական և տասնորդական կոտորակների, ամբողջ և ռացիոնալ թվերի մասին գիտելիքները և դրանց հետ հաշվումներ կատարելու կարողությունները, այդ գիտելիքներն ու կարողությունները կիրառել խնդիրների լուծման մեջ:

Մեծություններ բովանդակային գիծն ապահովում է գիտելիքներ մեծությունների, դրանց չափման միավորների մասին, նպաստում ձեռք բերելու չափումներ կատարելու փորձառություն, ապահովում է թվաբանության կիրառություն:

Երկրաչափության տարրերի բովանդակային գիծը սովորողներին նախնական ծանոթություն է տալիս երկրաչափական պատկերների և մարմինների հետ, հնարավորություն է տալիս ձեռք բերելու այդ պատկերներն ու մարմինները գծելու հմտություններ, զարգացնում է սովորողների տարածական պատկերացումներն ու տեղանքում կողմնորոշվելու կարողությունները, նախնական գաղափար է տալիս կոորդինատային ուղղի, կոորդինատային հարթության և պարզագույն գրաֆիկների մասին:

Հանրահաշվի տարրեր բովանդակային գիծն ուղղված է սովորողներին ծանոթացնելու տառի, նրա գործածության, պարզագույն հանրահաշվական հավասարումների և դրանց լուծման, ինչպես նաև նշանների, տառերի, սիմվոլների, գրաֆիկների, աղյուսակների և դիագրամների միջոցով մոդելավորման պարզագույն օրինակների հետ:

Տրամաբանության և ինֆորմատիկայի տարրեր բովանդակային գիծը սովորողին նախնական գաղափար է տալիս բազմությունների, ասույթի, ալգորիթմի, պատահույթի մասին, ծանոթացնում է տվյալներ հավաքելու և դրանք մշակելու եղանակների, կիրառական, տեքստային, հետաքրքրաշարժ, խաղային խնդիրների լուծման ձևերի հետ:

Բովանդակային միջուկ Մաթեմատիկա, 1-4-րդ դասարաններ

Թվաբանություն

Բնական թվեր և զրո, թվանշաններ, թվարկության դիրքային և ոչ դիրքային համակարգեր, թվային կարգեր, թվային դասեր, բնական թվի գրելը (թվանշաններով և բառերով) և կարդալը, բնական թվերի համեմատումը, բնական թվի կլորացումը մինչև նշված թվային կարգը, թվաբանական գործողություններ բնական թվերի հետ, թվաբանական գործողությունների հատկությունները, թվի ներկայացումը կարգային գումարելիների գումարի տեսքով, թվաբանական գործողությունների կատարման հերթականությունը, փակագծեր, գաղափար մնացորդով բաժանման մասին, զույգ և կենտ թվեր, բաժանարար, բազմապատիկ, բաժանելիության հայտնիչներ, կոտորակներ:

Մեծություններ

Երկարություն, ժամանակ, զանգված, ջերմաստիճան, մակերես, արագություն, փող: Չափման միավոր, չափման միավորի ընտրությունը, չափման գործիքներ՝ քանոն, ժամացույց, օրացույց, կշեռք, ջերմաչափ, չափման եղանակներ, չափման արդյունքը, նույն մեծության չափման տարբեր միավորների միջև եղած կապերը: Առարկաների համեմատումն ու դասակարգումը ըստ մեծությունների: Գաղափար ապրանքի գին - քանակություն - արժեք, արագություն-ժամանակ-ճանապարհի փոխկապակցվածությունների մասին:

Երկրաչափության տարրեր

Առարկաների փոխդասավորվածությունը՝ վերև - ներքև, առաջ - ետ, աջ - ձախ, բարձր - ցածր, մոտիկ - հեռու, ներս - դուրս, վրա - տակ և այլն:

Խորանարդ, գունդ, գլան, կոն, բուրգ, կետ, հատված, բեկյալ, ուղիղ, ճառագայթ, անկյուն, շրջան, շրջանագիծ, եռանկյուն, քառակուսի, ուղղանկյուն, քառանկյուն: Բազմանկյան կողմերը, պարագիծ, եռանկյան, քառանկյան, քառակուսու, ուղղանկյան պարագծերի հաշվումը: Կոորդինատային ճառագայթ, բնական թվի պատկերումը կոորդինատային ճառագայթի վրա, բնական թվերի համեմատումը կոորդինատային ճառագայթի միջոցով:

Հանրահաշվի տարրեր

Թվաբանական գործողություններում անհայտ բաղադրիչի գտնելը հայտնի բաղադրիչների միջոցով: Թվաբանական գործողությունների հատկությունների բառային և նշանային ձևակերպումը:

Տրամաբանության և ինֆորմատիկայի տարրեր

Գաղափար դատողությունների մասին:

Առարկաների խմբավորում և տեսակավորում ըստ տրված հատկանիշի՝ համեմատման, վերլուծման, համադրման միջոցով:

Տվայալների հավաքում դիտարկումների, հարցումների, փորձերի միջոցով, տվյալների ներկայացումը աղյուսակներով, դիագրամներով: Հաջորդականությունների օրինակներ, օրինաչափություններ:

Տրված պայմաններին բավարարող տարբերակներ, հնարավոր տարբերակների հաշվում: Կատարված փորձերում ելքերի գրանցում:

Գաղափար ալգորիթմի մասին, ալգորիթմների գրանցման ձևեր:

Խնդիր, խնդրի բաղադրիչների առանձնացում՝ պահանջ և պայման, անհայտ և հայտնի տվյալներ, խնդրում եղած տվյալների գրառում և դրանց միջև կապի բացահայտում: Խնդրի լուծման պլանի կազմում, գծապատկերների, աղյուսակների, կրճատ գրառումների օգտագործումը խնդիրների լուծման ընթացքում: Խնդրի լուծում և արդյունքի ստուգում: Կիրառական, տեքստային, հետաքրքրաշարժ, խաղային խնդիրներ:

Մաթեմատիկա, 5-6-րդ դասարաններ

Թվաբանություն

Բնական թվեր, բնական թվերի համեմատումը, թվի վերլուծումը պարզ արտադրիչների, ամենափոքր ընդհանուր բազմապատիկ, ամենամեծ ընդհանուր բաժանարար, փոխադարձ պարզ թվեր, բաժանելիության հայտանիշներ, բաժանում մնացորդով:

Ամբողջ և մասը, սովորական կոտորակներ, դրանց գրելն ու կարդալը, կանոնավոր և անկանոն կոտորակներ, սովորական կոտորակների հավասարությունը, սովորական կոտորակների համեմատումը, թվաբանական գործողություններ սովորական կոտորակների հետ, խառը թվեր, խառը թվերի հավասարությունը, խառը թվերի համեմատումը, թվաբանական գործողություններ սովորական կոտորակների և խառը թվերի հետ, թվի հակադարձը:

Թվարկության տասական համակարգի ընլայնումը, տասնորդական կոտորակներ, դրանց գրելն ու կարդալը, տասնորդական կոտորակների հավասարությունը, տասնորդական կոտորակների համեմատումը, տասնորդական կոտորակը սովորական կոտորակի տեսքով ներկայացնելը և հակառակը, գործողություններ տասնորդական կոտորակների հետ:

Բացասական ամբողջ թվեր, դրանց գրելն ու կարդալը, ամբողջ թվերի համեմատումը, ամբողջ թվի հակադիրը, բացարձակ արժեքը, գործողություններ դրական և բացասական ամբողջ թվերի հետ:

Ռացիոնալ թվեր, դրանց գրելն ու կարդալը, ռացիոնալ թվերի համեմատումը, ռացիոնալ թվի հակադիրը և հակադարձը, թվի բացարձակ արժեք, ռացիոնալ թվերի համեմատումը, գործողություններ ռացիոնալ թվերով:

Թվերի կլորացումը:

Կիրառություններ (մեծություններ և դրանց չափումը, չափման միավորներ)

Երկարություն, ժամանակ, զանգված, ջերմաստիճան, անկյուն, փող, մակերես, ծավալ, արագություն, արտադրողականություն: Չափման հիմնական գործիքներ՝ քանոն, ժամացույց, օրացույց, կշեռք, ջերմաչափ, անկյունաչափ, չափման միավոր, չափման միավորի ընտրությունը, չափման արդյունքը, չափման եղանակներ, նույն մեծության չափման տարբեր միավորների միջև եղած կապը, ժամային գոտիներ: Մեծությունների չափումը տրված ճշտությամբ: Առարկաների համեմատումն ու դասակարգումը ըստ տարբեր մեծությունների: Գաղափար ճանապարհ-ժամանակ-արագություն, աշխատանք-ժամանակ-արտադրողականություն փոխկապակցվածությունների մասին :

Երկրաչափության տարրեր

Ձուգահեռ, հատվող, փոխուղղահայաց ուղիղներ, բազմանկյուններ, ուղղանկյունանիստ, մակերես, ծավալ: Համաչափություն: Թվային ուղիղ, ռացիոնալ թվերի պատկերումը թվային ուղիղ վրա, կոորդինատային հարթություն, ռացիոնալ կոորդինատներով կետերի պատկերումը թվային հարթության վրա: Գաղափար գրաֆիկների մասին:

Հանրահաշվի տարրեր

Առօրյայում հանդիպող մեծությունների միջև եղած համեմատականությունների հայտնաբերումը և գրառումը: Ամբողջը և մասը, տոկոս, մասշտաբ: Մեկ անհայտով հավասարումների և անհավասարումների օրինակներ: Թվաբանական գործողությունների հատկությունները:

Տրամաբանության և ինֆորմատիկայի տարրեր

Գաղափար ասույթի մասին, «ոչ», «և», «կամ», «եթե-ապա» տրամաբանական ձևեր պարունակող դատողությունների օրինակներ: Ծանոթություն բազմությունների հետ, ենթաբազմության, բազմությունների միավորման և հատման օրինակներ: Առարկաների խմբավորում և դասակարգում ըստ տրված հատկանիշի՝ համեմատման, համադրման, վերլուծման միջոցով:

Տվյալների հավաքումը դիտարկումների, հարցումների, փորձերի միջոցով, դրանց ներկայացումը աղյուսակներով, գրաֆիկներով, դիագրամներով: Տվյալների աղյուսակների, հաջորդականությունների օրինակներ, օրինաչափություններ:

Տրված պայմաններին բավարարող տարբերակներ, հնարավոր տարբերակների քանակի հաշվում: Բազմակի ելք ունեցող իրադրություններ, հնարավոր ելքերի որոշում:

Գաղափար պատահույթի, պատահույթի հավանականության մասին, պարզ դեպքերում պատահույթի հավանականության հաշվում:

Գաղափար ալգորիթմի մասին, ալգորիթմների ներկայացման ձևեր:

Խնդիր, խնդրի բաղադրիչների առանձնացում՝ պահանջ և պայման, անհայտ և հայտնի տվյալներ, խնդրում եղած տվյալների գրանցում և դրանց միջև կապի բացահայտում: Խնդրի լուծման պլանի կազմում, գծապատկերների, աղյուսակների, դիագրամների, գրաֆիկների, կրճատ գրառումների օգտագործումը խնդիրների լուծման ընթացքում: Լուծման արդյունքի ստուգում: Կիրառական, տեքստային, հետաքրքրաշարժ, խաղային խնդիրներ:

Սովորողներին ներկայացվող պահանջներ
«Մաթեմատիկա» առարկայից, 1-4 դասարաններ

Ա. Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ

<p style="text-align: center;">Ա խումբ <i>(նվազագույն պահանջներ)</i></p>	<p style="text-align: center;">Բ խումբ <i>(ավելանում են Ա խմբի պահանջներին)</i></p>	<p style="text-align: center;">Գ խումբ <i>(ավելանում են Ա և Բ խմբերի պահանջներին)</i></p>
<p>Իմանա բնական թվերի հաջորդականությունը՝ կարողանա հաշվել առաջ և ետ 1 - ական, 2 - ական, 10 -ական, 100 -ական, գտնել տրված բնական թվի անմիջապես նախորդ և անմիջապես հաջորդ բնական թվերը, իմանա տասը հազարի սահմաններում բնական թվերի անվանումներն ու գրառումը, թվային կարգերի անվանումները, կարողանա որոշել բնական թվի մեջ տրված կարգում գտնվող թվանշանը, կարդալ և գրել (թվանշաններով և բառերով) տասը հազարից փոքր բնական թիվը, իմանա բնական թվերի համեմատման ալգորիթմը, կարողանա համեմատել տասը հազարից փոքր երկու բնական թվեր, իմանա բնական թվի կլորացման ալգորիթմը, կարողանա տասը հազարից փոքր բնական թիվը կլորացնել մինչև նշված կարգը, իմանա միանիշ թվերի գումարման աղյուսակը, կարողանա բանավոր գումարել և հանել թվերը 20-ի սահմանում, իմանա միանիշ</p>	<p>Իմանա միլիոնի սահմանում բնական թվերի անվանումներն ու գրառումը, թվային դասերի անվանումները, կարողանա կարդալ և գրել (թվանշաններով և բառերով) միլիոնից փոքր բնական թիվը, համեմատել միլիոնից փոքր երկու բնական թվեր, միլիոնից փոքր բնական թիվը կլորացնել մինչև նշված թվային կարգը, բանավոր գումարել և հանել թվերը 100-ի սահմանում, գումարել և հանել բազմանիշ թվեր միլիոնի սահմանում, կատարել բազմանիշ թվի բազմապատկում երկնիշ թվով, հաշվել երեք գործողությամբ արտահայտության արժեքը (նաև փակագծերի առկայությամբ), իմանա բազմապատիկ և բաժանարար հասկացությունները, կարողանա գտնել երկնիշ թվի բաժանարարները, գտնել տրված բնական թվի բազմապատիկներ, ամբողջ թիվը ներկայացնել կոտորակի տեսքով:</p>	<p>Իմանա բնական թվերի դասային և կարգային կազմությունը, կարողանա տրված բնական թվերը դասավորել աճման կամ նվազման կարգով, երկնիշ թիվը բանավոր բազմապատկել միանիշ թվով, բազմանիշ թիվը ներկայացնել կարգային գումարելիների գումարի տեսքով, կատարել բազմանիշ թվի բաժանում երկնիշ թվի վրա (առանց մնացորդի և մնացորդով դեպքերում), համեմատել նույն հայտարար կամ նույն համարիչ ունեցող երկու կոտորակներ:</p>

<p>թվերի բազմապատկման աղյուսակը, թվաբանական գործողությունների նշանները և բաղադրիչների անվանումները, գործողությունների կատարման ալգորիթմները, կարողանա տասը հազարի սահմաններում գումարել և հանել թվերը, կատարել բազմանիշ թվի բազմապատկում միանիշ թվով, կատարել բազմանիշ թվի բաժանում միանիշ թվի վրա(առանց մնացորդի և մնացորդով դեպքերում), իմանա գործողությունների կատարման հերթականությունը թվային արտահայտություններում, կարողանա հաշվել երկու գործողությամբ արտահայտության արժեքը, որոշել տրված թվի զույգ կամ կենտ լինելը, իմանա և պարզագույն դեպքերում կարողանա կիրառել 10-ի, 2-ի, 5-ի, վրա բաժանելիության հայտանիշները, գաղափար ունենա ամբողջի և դրա մասերի մասին, կարողանա մասը արտահայտել կոտորակով, թվերը կիրառել հաշվում, համարակալում, խմբավորում պահանջող պարզագույն իրադրություններում:</p>		
<p>իմանա երկարության չափման միավորներ (սանտիմետր, մետր, կիլոմետր), կարողանա քանոնով չափումներ կատարել և գրանցել չափման մոտավոր արդյունքը, իմանա ժամանակի չափման միավորներ (վայրկյան, րոպե, ժամ, օր, շաբաթ, ամիս, տարի) ամիսներում օրերի քանակը, կարողանա օգտվել ժամացույցից (սլաքներով և թվային),</p>	<p>իմանա երկարության չափման միավորներ (միլիմետր, դեցիմետր), կարողանա հեռավորության չափման արդյունքն արտահայտել տարբեր միավորներով (մեծ միավորից անցնել փոքր միավորի), իմանա ժամանակի չափման միավորներից դարը, կարողանա տարբեր միավորներով արտահայտել նույն ժամանակահատվածը</p>	<p>իմանա զանգվածի չափման միավորներից ցենտները, մեծությունների չափման համար տարբեր գործիքներով չափման եղանակներ</p> <p>կարողանա չափման արդյունքը գրանցել տարբեր միավորներով (փոքր միավորից անցնել մեծ միավորի), մեծության չափման համար ընտրել հարմար գործիք</p>

<p>օրացույցից, պարզագույն դեպքերում չափել երկու պատահարների միջև ընկած ժամանակահատվածը ըստ րոպեի ճշտությամբ, որոշել տարվա նահանջ լինելը, իմանա զանգվածի չափման միավորներ (գրամ, կիլոգրամ), պարզագույն դեպքերում կարողանա կշռել մարմնի զանգվածը և գրանցել արդյունքը, իմանա մեծությունների չափման եղանակներ, կարողանա ջերմաչափի միջոցով որոշել ջերմաստիճանը Ցելսիուսի սանդղակով, ջերմաստիճանի փոփոխությունը, դրամով հաշվել և վճարել գնված ապրանքի համար, առարկաները համեմատել և դասավորել ըստ չափսերի, պատահարները դասավորել ըստ ժամանակային հերթականության, կազմել ժամատախտակ, գաղափար ունենա մակերեսի մասին, կարողանա հաշվել քառակուսու, ուղղանկյան մակերեսը, գաղափար ունենա արագության մասին, կրողանա արագություն-ժամանակ-ճանապարհի փոխկապակցվածությունում երկու հայտնիների միջոցով երրորդը հաշվել, գաղափար ունենա անկյան մասին, կարողանա փոխադրիչով չափել անկյունը աստիճանի ճշտությամբ:</p>	<p>(մեծ միավորից անցնել փոքր միավորի), իմանա զանգվածի չափման միավորներից տոննան, կարողանա իմանալով մարմնի մասերի զանգվածը հաշվել ամբողջ մարմնի զանգվածը, զանգվածի չափման մի միավորից անցնել մյուսին (մեծից փոքրին), առարկաները համեմատել ըստ համասեռ մեծությունների, փոխադրիչով գծել տրված մեծության անկյուն, գործողություններ կատարել անվանական թվերի հետ,</p>	
<p>ճանաչի երկրաչափական մարմինները, պատկերները (խորանարդ, գունդ, կետ, ուղիղ, հատված, շրջան, եռանկյուն, ուղղանկյուն, քառակուսի, քառանկյուն),</p>	<p>ճանաչի երկրաչափական մարմինները և պատկերները (բուրգ, գլան, բեկյալ, ճառագայթ, անկյուն, բազմանկյուն, շրջան), կարողանա հաշվել բազմանկյան պարագիծը,</p>	<p>ճանաչի կոնը, իմանա կոորդինատային ճառագայթի միջոցով բնական թվերի համեմատման ալգորիթմը, կարողանա գծել բնակարանի մոտավոր հատակագիծը,</p>

<p>կարողանա գծել նշված հարթ պատկերները, հաշվել եռանկյան, քառակուսու, ուղղանկյան, քառանկյան պարագծերը, կոորդինատային ճառագայթի վրա պատկերել տրված բնական թիվը և որոշել տրված կետի կոորդինատը</p>	<p>գծել սենյակի հատակագիծը, տրված պատկերը բաժանել մասերի, իմանա կոորդինատային ճառագայթի վրա բնական թվի պատկերման ձևը, կարողանա բնական թվերը համեմատել կոորդինատային ճառագայթի միջոցով</p>	<p>տրված պատկերներից ստանալ նոր պատկերներ:</p>
<p>գիտենա թվաբանական գործողությունների հատկությունները, կարողանա հայտնի գումարի և գումարելիներից մեկի միջոցով հաշվել մյուս գումարելին, հայտնի նվազելիի և տարբերության միջոցով հաշվել հանելին, հայտնի տարբերության և հանելիի միջոցով հաշվել նվազելին, հայտնի արտադրյալի և արտադրիչներից մեկի միջոցով հաշվել մյուս ատադրիչը (առանց մնացորդի բաժանման դեպքը), հայտնի բաժանելիի ու քանորդի միջոցով հաշվել բաժանարարը (առանց մնացորդի բաժանման դեպքը), հայտնի քանորդի և բաժանարարի միջոցով հաշվել բաժանելին</p>	<p>իմանա թվաբանական գործողությունների հատկությունների բառային ձևակերպումները, կարողանա մեկ գործողություն պարունակող հայերեն նախադասությունը գրել թվային արտահայտության տեսքով, մեկ գործողություն պարունակող թվային արտահայտությունը գրել հայերեն</p>	<p>իմանա թվաբանական գործողությունների հատկությունների նշանային ձևակերպումը, կարողանա հայտնի բաժանարարի, քանորդի և մնացորդի միջոցով գտնել բաժանելին, հաշվումներ կատարելիս օգտագործել թվաբանական գործողությունների հատկությունները, 2-3 գործողություն պարունակող թվային արտահայտությունը կարդալ հայերեն և հակառակը</p>
<p>գաղափար ունենա դատողության մասին, իմանա տվյալները աղյուսակի տեսքով ներկայացնելու և աղյուսակներից ու</p>	<p>իմանա ալգորիթմների գրանցման պայմանաճանճեր, կարողանա առարկաները տեսակավորել և խմբավորել</p>	<p>կարողանա առարկաները տեսակավորել և խմբավորել ըստ երկուսից ավելի հատկանիշերի, տվյալները ներկայացնել</p>

<p>դիագրամներից տվյալներ ստանալու եղանակներ, կարողանա առարկաները տեսակավորել և խմբավորել ըստ տրված հատկանիշի համեմատման միջոցով, հարցումների միջոցով տվյալներ հավաքել և գրանցել դրանք, աղյուսակներից, դիագրամներից տվյալներ ստանալ, տրված պայմաններին բավարարող տարբերակներ գրանցել, որոշված նպատակին հասնելու գործողությունների հաջորդականություն կազմել, օգտվել կյանքում հանդիպող աղյուսակային տվյալներից (դասացուցակ, գնացուցակ, չվացուցակ և այլն)</p>	<p>ըստ երկու հատկանիշի համադրման, միջոցով, դիտարկումների, փորձերի միջոցով տվյալներ (նաև ոչ թվային) հավաքել և գրանցել դրանք, տվյալները ներկայացնել աղյուսակների միջոցով, տրված հաջորդականությունների օրինակներում նկատել օրինաչափությունը և շարունակել հաջորդականությունը, բազմակի ելք ունեցող պարզ իրավիճակներում գրանցել տրված պայմաններին բավարարող բոլոր հնարավոր տարբերակները, նպատակին հասնելու գործողությունների հաջորդականությունը (ալգորիթմը) գրանցել պայմանաճանճանների միջոցով</p>	<p>դիագրամների միջոցով, հաշվել տրված պայմաններին բավարարող տարբերակների քանակը, տարբեր ալգորիթմներ գտնել և համեմատել դրանք</p>
<p>իմանա խնդրի բաղադրիչները, կարողանա առանձնացնել խնդրի պայմանը և պահանջը, խնդրի լուծման պլան կազմել, խնդիրների լուծման ժամանակ գծապատկերներ, աղյուսակներ օգտագործել, օգտակար քայլեր գտնել կիրառական, հետաքրքրաշարժ խնդիրների լուծման և խաղերի համար (գետանց, լաբիրինթոս, դոմինո, մատիտի մեկ հպումով գծվող պատկերներ և այլն), ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած տերմինները, մասնակցել քննարկումների, օգտվել ուրիշի դատողություններից, տվյալներից, խնդիրներ լուծելիս մասնակցել խմբային աշխատանքի, խոսքային և ոչ խոսքային աղբյուրներից տեղեկություն ստանալ</p>	<p>կարողանա խնդիրը վերլուծել ավելի պարզ խնդիրների, խնդրի լուծման տարբեր եղանակներ փնտրել, տրված պայմանների դեպքում խնդիր ձևակերպել, քայլեր և ալգորիթմներ մշակել կիրառական, հետաքրքրաշարժ խնդիրների լուծման և խաղերի համար (գետանց, լաբիրինթոս, դոմինո, մատիտի մեկ հպումով գծվող պատկերներ, կեղծ դրամներ, շախմատի տախտակ և այլն), ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած հասկացությունները, արտահայտությունները</p>	<p>կարողանա առանց խնդիրը լուծելու կռահել և գնահատել խնդրի պատասխանը, համեմատել լուծման արդյունքի հետ, լուծման արդյունավետ եղանակներ ընտրել կիրառական, հետաքրքրաշարժ խնդիրների և խաղերի համար, ունեցած տեղեկությունները մշակել, համեմատել և ներկայացնել տարբեր ձևերով</p>

Բ. Արժեքային համակարգ

Ներկայացվող պահանջներն արտահայտվում են սովորողի՝ որպես քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով: Մաթեմատիկայի ուսումնասիրման շնորհիվ սովորողը պետք է՝

- գիտակցի գիտելիքների կարևորությունը, դրանց կիրառության արդյունավետությունը կյանքում,
- գիտակցի թվի, թվաբանական գործողությունների, դրանց հատկությունների կարևորությունը առօրեայում և հետագա ուսումնական գործընթացում,
- գիտակցի մեծությունների, դրանց չափման կարևորությունը և անհրաժեշտությունը առօրեայում և այլ ուսումնական առարկաներ ուսումնասիրելիս,
- գիտակցի ոչ խոսքային միջոցների՝ գծապատկերների, նշանների և պայմանանշանների դերը հաղորդակցման մեջ,
- զգա համաչափ ու ներդաշնակ պատկերների գեղեցկությունը, ձգտի ստեղծագործական աշխատանքների միջոցով գեղագիտական հաճույք ստանալ,
- գիտակցի առօրյա իրավիճակներում տարբեր ելքերի հնարավորությունը,
- զգա կազմակերպված տվյալներից օգտվելու հարմարավետությունը և գիտակցի տվյալները կազմակերպված ներկայացնելու կարևորությունը,
- գնահատի ճշտապահությունը, ազնվությունը, պարտաճանաչությունը,
- կարևորի ուշադիր և կենտրոնացված աշխատանքը,
- գիտակցի ուրիշների հետ աշխատելու անհրաժեշտությունը:

«Մաթեմատիկա» 5-6-րդ դասարաններ

Ա. Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ

	Ա խումբ <i>(նվազագույն պահանջներ)</i>	Բ խումբ <i>(ավելանում են Ա խմբի պահանջներին)</i>	Գ խումբ <i>(ավելանում են Ա և Բ խմբերի պահանջներին)</i>
--	---	--	--

Թվայնություն	<p>Գաղափար ունենա բնական թվի մասին, կարողանա գրել և կարդալ բնական թիվը (թվանշաններով ու բառերով), համեմատել երկու բնական թվեր, տրված բնական թվերը դասավորել աճման կամ նվազման կարգով, բնական թիվը ներկայացնել կարգային գումարելիների գումարի տեսքով, թվաբանական գործողություններ կատարել բնական թվերի հետ, հաշվել 2-3 գործողությամբ թվային արտահայտության արժեքը:</p> <p>Իմանա բնական թվի կլորացման ալգորիթմը, կարողանա բնական թիվը կլորացնել մինչև նշված կարգը, որոշել տրված բնական թվի զույգ կամ կենտ լինելը, օգտագործել 10-ի, 2-ի, 5-ի վրա բաժանելիության հայտանիշները:</p> <p>Գաղափար ունենա բնական թվի բաժանարարի, բազմապատիկի, պարզ և բաղադրյալ թվերի, երկու թվերի ընդհանուր բաժանարարի և բազմապատիկի մասին, կարողանա գտնել երկնիշ թվի բաժանարարները, երկու բնական թվերի համար ընդհանուր բազմապատիկ և ընդհանուր բաժանարար նշել, բնական թիվը ներկայացնել պարզ թվերի արտադրյալի տեսքով:</p>	<p>Կարողանա հաշվել 3-4 գործողությամբ թվային արտահայտության արժեքը, կիրառել 3-ի, 9-ի վրա բաժանելիության հայտանիշները, ստուգել բնական թվի պարզ կամ բաղադրյալ լինելը:</p> <p>Իմանա 20-ից փոքր պարզ թվերը, ամենափոքր ընդհանուր բազմապատիկ և ամենամեծ ընդհանուր բաժանարար հասկացությունները, կարողանա գտնել երկու երկնիշ թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը և ամենափոքր ընդհանուր բազմապատիկը:</p>	<p>Հասկանա, որ ամենամեծ բնական թիվ չկա:</p> <p>Կարողանա կարդալ 4-5 գործողությամբ թվային արտահայտությունը և հաշվել դրա արժեքը, կիրառել 4-ի վրա բաժանելիության հայտանիշը:</p> <p>Իմանա ամենամեծ ընդհանուր բաժանարար և ամենափոքր ընդհանուր բազմապատիկ գտնելու ալգորիթմները և կարողանա կիրառել դրանք, գաղափար ունենա փոխադարձ պարզ թվերի մասին:</p>
---------------------	---	---	--

Թվայնացում	<p>Գաղափար ունենա սովորական, կանոնավոր և անկանոն կոտորակների մասին, կարողանա գրել և կարդալ սովորական կոտորակը, պարզ դեպքերում կրճատել կոտորակը, գտնել տրվածին հավասար կոտորակ, համեմատել նույն հայտարարն ունեցող կոտորակներ, թվաբանական գործողություններ կատարել կոտորակների հետ:</p> <p>Գաղափար ունենա խառը թվի մասին, կարողանա կարդալ և գրել խառը թիվը, անկանոն կոտորակը ներկայացնել խառը թվի տեսքով և հակառակը, թվաբանական գործողություններ կատարել խառը թվերի հետ:</p>	<p>Կարողանա առանձնացնել ամբողջի մասը և այն արտահայտել սովորական կոտորակով, իմանա սովորական կոտորակների հավասարությունը, սովորական կոտորակների հիմնական հատկությունները, կարողանա կրճատել կոտորակը, համեմատել կոտորակները, խառը թվերը:</p> <p>Իմանա սովորական կոտորակների և խառը թվերի հետ թվաբանական գործողությունների հատկությունները և կարողանա պարզ դեպքերում կիրառել:</p>	<p>Իմանա սովորական կոտորակների համեմատման տարբեր եղանակներ և կարողանա դրանք կիրառել, կարողանա թվաբանական գործողությունների հատկությունները կիրառել հաշվումներ կատարելիս:</p>
	<p>Գաղափար ունենա վերջավոր տասնորդական կոտորակի մասին, կարողանա գրել և կարդալ վերջավոր տասնորդական կոտորակը, այն ներկայացնել սովորական կոտորակի տեսքով, համեմատել տասնորդական կոտորակներ, թվաբանական գործողություններ կատարել տասնորդական կոտորակների հետ:</p>	<p>Կարողանա առանձնացնել ամբողջի մասը և այն արտահայտել տասնորդական կոտորակով, սովորական կոտորակը ներկայացնել տասնորդական կոտորակի տեսքով (հնարավոր դեպքերում), իմանա տասնորդական կոտորակների հետ թվաբանական գործողությունների հատկությունները և կարողանա պարզ դեպքերում կիրառել, գործողություններ կատարել սովորական և տասնորդական կոտորակների հետ:</p>	<p>Իմանա տասնորդական կոտորակների համեմատման եղանակներ և կարողանա կիրառել դրանք, կարողանա հաշվել սովորական, տասնորդական կոտորակներ և խառը թվեր պարունակող թվային արտահայտության արժեքը, հաշվումներ կատարելիս օգտագործել թվաբանական գործողությունների հատկությունները:</p>

<p>Գաղափար ունենա բացասական ամբողջ թվի, թվի հակադիրի, թվի բացարձակ արժեքի մասին, կարողանա գրել և կարդալ ամբողջ թիվը, գտնել թվի հակադիրը և բացարձակ արժեքը, համեմատել ամբողջ թվերը, թվաբանական գործողություններ կատարել ամբողջ թվերի հետ:</p>	<p>Գաղափար ունենա ամբողջ թվի մասին, կարողանա գտնել տրված բացարձակ արժեքն ունեցող թվերը:</p> <p>Իմանա ամբողջ թվերի հետ թվաբանական գործողությունների հատկությունները և կարողանա պարզ դեպքերում կիրառել:</p>	<p>Իմանա ամբողջ թվերի համեմատման եղանակներ և կարողանա դրանք կիրառել, կարողանա հաշվել ամբողջ թվեր, բացարձակ արժեք պարունակող թվային արտահայտության արժեքը, հաշվումներ կատարելիս օգտագործել թվաբանական գործողությունների հատկությունները:</p>
<p>Գաղափար ունենա ռացիոնալ թվերի մասին, կարողանա գրել և կարդալ ռացիոնալ թիվը, գտնել տրված ռացիոնալ թվի բացարձակ արժեքը, համեմատել երկու ռացիոնալ թվեր, գտնել ռացիոնալ թվի հակադիրը և հակադարձը, թվաբանական գործողություններ կատարել ռացիոնալ թվերի հետ:</p>	<p>Իմանա ռացիոնալ թվերի հետ թվաբանական գործողությունների հատկությունները և պարզ դեպքերում կարողանա կիրառել դրանք:</p>	<p>Իմանա ռացիոնալ թվերի համեմատման եղանակներ, ռացիոնալ թվերի հետ թվաբանական գործողություններ կատարելու կանոնները և կարողանա դրանք կիրառել, կարողանա հաշվել ռացիոնալ թվեր, պարունակող թվային արտահայտության արժեքը, հաշվումներ կատարելիս օգտագործել թվաբանական գործողությունների հատկությունները:</p>
<p>Գաղափար ունենա թվի կլորացման մասին և կարողանա բնական թիվը և տասնորդական կոտորակը կլորացնել մինչև նշված թվային կարգը:</p>	<p>Կարողանա կլորացնել ամբողջ թիվը և սովորական կոտորակը:</p>	<p>Կարողանա կլորացնել ռացիոնալ թիվը:</p>

Գաղափար ունենա մեծությունների մասին, **կարողանա** գնահատել չափվող մեծության արժեքը և չափման միջոցով ստուգել գնահատման ճշտությունը:

Իմանա հեռավորության չափման միավորներ (միլիմետր, սանտիմետր, դեցիմետր, մետր, կիլոմետր), **կարողանա** քանոնով չափումներ կատարել և գրանցել չափման մոտավոր արդյունքը, չափման մեծ միավորից անցնել փոքրին, **իմանա** ժամանակի չափման միավորներ (վայրկյան, րոպե, ժամ, օր, շաբաթ, ամիս, տարի, դար, հազարամյակ), ամիսներում օրերի քանակը, **կարողանա** օգտվել ժամացույցից (սլաքներով և թվային), օրացույցից, չափել երկու պատահականների միջև ընկած ժամանակահատվածը րոպեի ճշտությամբ, ժամանակի չափման մեծ միավորից անցնել փոքրին, որոշել տարվա նահանջ լինելը, անկյունաչափով չափել անկյունը և գրանցել արդյունքը աստիճանի ճշտությամբ:

Իմանա զանգվածի չափման միավորներ (գրամ, կիլոգրամ, ցենտներ, տոննա), **կարողանա** կշռել մարմնի զանգվածը և գրանցել արդյունքը, չափման մեծ միավորից անցնել փոքրին, **իմանա** մակերեսի չափման միավորներ (քակուսի դեցիմետր, քառակուսի մետր, հեկտար), **իմանա** ծավալի չափման միավորներ (լիտր, խորանարդ դեցիմետր), խորանարդ մետր), ջերմաչափի միջոցով որոշել ջերմաստիճանը, ջերմաստիճանի փոփոխությունը Ցելսիուսի սանդղակով: **Գաղափար ունենա** ճանապարհ-ժամանակ-արագություն փոխկապակցվածության մասին, **կարողանա** պարզ դեպքերում երկու հայտնիի միջոցով երրորդը հաշվել, առարկաները համեմատել և դասավորել ըստ չափվող մեծությունների, պատահականները դասավորել ըստ ժամանակային հերթականության:

Իմանա մակերեսի չափման միավորներ (քակուսի սանտիմետր, ար), ծավալի չափման միավորներ (խորանարդ սանտիմետր), անկյան չափման միավորներ (րոպե), նույն մեծության չափման տարբեր միավորների միջև եղած առնչությունները:

Կարողանա չափումներ կատարել, գրանցել դրանց արդյունքը և այն արտահայտել չափման տարբեր միավորներով:

Գաղափար ունենա ժամային գոտիների մասին, **գաղափար ունենա** աշխատանք-ժամանակ-արտադրողականություն փոխկապակցվածության մասին, **կարողանա** պարզ դեպքերում երկու հայտնիի միջոցով երրորդը հաշվել:

Իիմանա արտարժույթներից ռուբլին, եվրոն, դոլարը, ֆունտ-ստերլինգը, **կարողանա** հաշվել դրամով դրանց փոխարժեքը և հակառակը:

Իմանա մակերեսի չափման միավորներ (քակուսի միլիմետր, քառակուսի կիլոմետր), ծավալի չափման միավորներ (խորանարդ միլիմետր, խորանարդ կիլոմետր), անկյան չափման միավորներ (վայրկյան), **կարողանա** չափման արդյունքը գրանցել տարբեր միավորներով, մեծության չափման համար ընտրել հարմար գործիք:

Չասկանա ճանապարհ-ժամանակ-արագություն, աշխատանք-ժամանակ-արտադրողականություն փոխկապակցվածությունները, **կարողանա** առօրյա խնդիրներում կիրառել դրանք:

Իմանա արտարժույթների մասին, **կարողանա** ռուբլին, եվրոն, դոլարը, ֆունտ-ստերլինգը արտահայտել մեկը մյուսով:

<p>Երկրաչափության տարրեր</p>	<p>Ճանաչի երկրաչափական մարմինները և պատկերները (խորանարդ, գունդ, գլան, կոն, կետ, ուղիղ, հատված, ճառագայթ, շրջան, շրջանագիծ, եռանկյուն, ուղղանկյուն, քառակուսի, բազմանկյուն), կարողանա գծել նշված հարթ պատկերները, տարբերել հատվող, զուգահեռ, փոխուղղահայաց ուղիղները:</p> <p>Գաղափար ունենա համաչափության մասին:</p> <p>Իմանա բազմանկյան պարագծը, ուղղանկյան մակերեսը, ուղղանկյունանիստի ծավալը հաշվելու բանաձևերը և կարողանա հաշվումներ կատարել այդ բանաձևերի միջոցով:</p> <p>Կարողանա հարթ պատկերը բաժանել մասերի և մասերից նոր պատկերներ կառուցել:</p> <p>Գաղափար ունենա կոորդինատային ուղղի, դրա վրա ռացիոնալ թվերի պատկերման, կոորդինատային հարթության մասին:</p>	<p>Կարողանա գծել հատվող, զուգահեռ, փոխուղղահայաց ուղիղներ, անկյունաչափով կառուցել տրված մեծության անկյուն, պարզ դեպքերում կառուցել տրված պատկերի համաչափ պատկերը, տրված պատկերը բաժանել որոշակի պայմանի բավարարող մասերի:</p> <p>Իմանա թվի բացարձակ արժեքի երկրաչափական իմաստը, կոորդինատային ուղղի վրա ռացիոնալ թվի պատկերման ալգորիթմը, կարողանա ռացիոնալ թվերը համեմատել կոորդինատային ուղղի միջոցով, որոշել կոորդինատային հարթության կետի կոորդինատները (ամբողջ կոորդինատներով դեքերում): Պարզ դեպքերում մեծությունների միջև եղած համեմատականությունները պատկերել գրաֆիկորեն:</p>	<p>Կարողանա մասերի բաժանելու միջոցով հաշվել պատկերի մակերեսը, մարմնի ծավալը, տրված պատկերներից ստանալ որոշակի պայմանի բավարարող նոր պատկերներ, կոորդինատային հարթության վրա կառուցել ռացիոնալ կոորդինատներով կետը, տրված գրաֆիկից տվյալներ ստանալ:</p>
------------------------------	---	--	---

<p>Հանրահաշվի տարրեր</p>	<p>Գիտենա թվաբանական գործողությունների հատկությունները, կարողանա թվաբանական գործողություններում հայտնի երկու բաղադրիչների միջոցով երրորդը հաշվել, մեկ գործողություն պարունակող հայերեն նախադասությունը գրել թվային արտահայտության տեսքով և հակառակը:</p> <p>Ծանոթ լինի մեկ անհայտով պարզագույն հավասարումների, պատկերացում ունենա առօրյայում հանդիպող մեծությունների միջև եղած համեմատականությունների և դրանք հավասարումների տեսքով ներկայացնելու մասին:</p> <p>Իմանա թվի մասը, տոկոսը կարողանա տոկոսն արտահայտել մասով, գտնել թվի տրված տոկոսը:</p> <p>Փաղափար ունենա մասշտաբի մասին:</p>	<p>Իմանա թվաբանական գործողությունների հատկությունների բառային ձևակերպումները և կարողանա հատկություններն օգտագործել հաշվումներ կատարելիս, կարողանա երկուերեք գործողություն պարունակող հայերեն նախադասությունը գրել թվային արտահայտության տեսքով և հակառակը:</p> <p>Կարողանա մեծությունների նշանակման համար օգտագործել տառեր, լուծել մեկ անհայտով պարզագույն հավասարումներ, առօրյայում հանդիպող մեծությունների միջև եղած համեմատականությունները գրառել տառերի, նշանների միջոցով, իմանա մասի, տոկոսի կիրառության օրինակներ, կարողանա թվի տրված մասի միջոցով հաշվել թիվը, թվի տրված տոկոսի միջոցով հաշվել թիվը, պարզել` մի թիվը մյուսի որ տոկոսն է կազմում, քարտեզի վրա հաշվել հեռավորություններ:</p>	<p>Իմանա թվաբանական գործողությունների հատկությունների նշանային ձևակերպումը և կարողանա այդ հատկությունները կիրառել անձանոթ իրավիճակներում:</p> <p>Կարողանա թվաբանական գործողություններում հայտնի երկու բաղադրիչների միջոցով երրորդը հաշվել և ստուգել արդյունքը, թվային արտահայտությունը կարգալ հայերեն և հակառակը, թիվը մեծացնել կամ փոքրացնել տրված մասով, տոկոսով, հմտորեն կիրառել մասը, տոկոսը, մեծությունների միջև եղած համեմատականությունները:</p>
--------------------------	---	---	--

Տրամաբանություն եւ ինֆորմատիկայի տարրեր	<p>Իմանա ասույթների, «և», «ոչ», «կամ» տրամաբանական ձևեր պարունակող դատողությունների, բազմությունների օրինակներ, կարողանա կազմել վերջավոր բազմության ենթաբազմություն:</p> <p>Իմանա տվյալները աղյուսակի, դիագրամի տեսքով ներկայացնելու և աղյուսակներից ու դիագրամներից տվյալներ ստանալու եղանակներ:</p> <p>Կարողանա առարկաները տեսակավորել և խմբավորել ըստ տրված հատկանիշի համեմատման միջոցով, հարցումների, փորձերի միջոցով տվյալներ (մաև ոչ թվային) հավաքել և գրանցել դրանք, աղյուսակներից, դիագրամներից տվյալներ ստանալ, տվյալների վերջավոր հաջորդականությունում որոշել ամենահաճախ հանդիպողը, տրված պայմաններին բավարարող տարբերակներ գրանցել, պարզագույն դեպքերում հաշվել այդպիսի տարբերակների քանակը, գաղափար ունենա պատահույթի մասին, բազմակի ելք ունեցող պարզագույն իրադրություններում գտնել հնարավոր ելքերը և դրանցից առանձնացնել նշված պայմանին բավարարողները, պարզ դեպքերում որոշված նպատակին հասնելու ալգորիթմ կազմել, օգտվել առօրյայում հանդիպող աղյուսակային, դիագրամային տվյալներից:</p>	<p>Իմանա «եթե-ապա» տրամաբանական ձև պարունակող դատողությունների օրինակներ, ալգորիթմների գրանցման պայմանաճշաններ:</p> <p>Կարողանա առարկաները տեսակավորել և խմբավորել ըստ երկու հատկանիշի համադրման, միջոցով, գտնել տրված վերջավոր բազմությունների հատումը, դիտարկումների միջոցով տվյալներ (մաև ոչ թվային) հավաքել և գրանցել դրանք, տվյալները ներկայացնել դիագրամների միջոցով, տրված հաջորդականությունների օրինակներում նկատել օրինաչափությունը և շարունակել հաջորդականությունը, գրանցել տրված պայմաններին բավարարող բոլոր հնարավոր տարբերակները, բազմակի ելք ունեցող իրադրություններում գտնել հնարավոր ելքերի քանակը և հաշվել նշված պատահույթի հաճախությունը, նպատակին հասնելու ալգորիթմ կազմել և գրանցել պայմանաճշանների միջոցով:</p>	<p>Կարողանա տվյալները ներկայացնել տարբեր տեսքի դիագրամներով, առարկաները տեսակավորել և խմբավորել ըստ երկուսից ավելի հատկանիշերի վերլուծման միջոցով, տվյալների աղյուսակներում և հաջորդականություններում</p> <p>օրինաչափություններ նկատել, հաշվել տրված պայմաններին բավարարող տարբերակների քանակը:</p> <p>Գաղափար ունենա պատահույթի հավանականության մասին, կարողանա պարզ դեպքերում հաշվել այդ հավանականությունը, հավանականությունը համեմատել փորձնական տվյալներից ստացված հաճախության հետ, նպատակին հասնելու տարբեր ալգորիթմներ գտնել և համեմատել դրանք:</p>
--	---	--	--

<p>Իմանա խնդրի բաղադրիչները, Կարողանա առանձնացնել խնդրի պայմանը և պահանջը, խնդրի լուծման պլան կազմել, խնդիրների լուծման ժամանակ գծապատկերներ, աղյուսակներ, դիագրամներ օգտագործել, օգտակար քայլեր գտնել կիրառական, հետաքրքրաշարժ խնդիրների լուծման և խաղերի համար (գետանց, լաբիրինթոս, դոմինո, մատիտի մեկ հպումով գծվող պատկերներ և այլն), ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած տերմինները, մասնակցել քննարկումների, օգտվել ուրիշի դատողություններից, տվյալներից, խնդիրներ լուծելիս մասնակցել խմբային աշխատանքի, խոսքային և ոչ խոսքային աղբյուրներից տեղեկություն ստանալ :</p>	<p>Կարողանա խնդիրը ավելի պարզ խնդիրների վերածել, խնդրի լուծման տարբեր եղանակներ փնտրել, տրված պայմաններով խնդիր կազմել, քայլեր և ալգորիթմներ մշակել կիրառական, հետաքրքրաշարժ խնդիրների լուծման և խաղերի համար (գետանց, լաբիրինթոս, դոմինո, մատիտի մեկ հպումով գծվող պատկերներ, կեղծ դրամներ, շախմատի տախտակ և այլն), ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած հասկացությունները, արտահայտությունները:</p>	<p>Կարողանա առանց խնդիրը լուծելու կռահել և գնահատել խնդրի պատասխանը, համեմատել լուծման արդյունքի հետ, լուծման արդյունավետ եղանակներ ընտրել կիրառական, հետաքրքրաշարժ խնդիրների և խաղերի համար, ունեցած տեղեկությունները մշակել, համեմատել և ներկայացնել տարբեր ձևերով :</p>
--	---	---

Բ. Արժեքային համակարգ

Մաթեմատիկայի ուսուցման արդյունքում աշակերտը պետք է.

- Գիտակցի մաթեմատիկայի տեսական և գործնական նշանակությունը,
- Գիտակցի մաթեմատիկայի անհրաժեշտությունը մյուս ուսումնական առարկաների ուսումնասիրության համար:
- Ճանաչի մաթեմատիկան որպես մշակույթի կարևոր մաս, հասկանա առարկայի պատմական զարգացման դերն ու նշանակությունը հասարակության զարգացման մեջ:
- Յետաքրքրություն հանդես բերի մաթեմատիկայի նկատմամբ, գեղագիտական արժեքներ հայտնաբերի մաթեմատիկական մոդելներում, տրամաբանական կառուցվածքներում ու հարաբերություններում, բավարարվածության և հրճվանքի զգացում ունենա խնդիրներ լուծելիս:
- Ձգտի լինել տեղեկատվության, ըմբռնումների, իմացության կրողն ու տարածողը:
- Գիտակցի տարածական կողմնորոշման կարևորությունը, վերացարկված երկրաչափական պատկերների և իրական առարկաների կապը:

- Գիտակցի մաթեմատիկական գիտության ձևավորման ու զարգացման համար գործնականում ծագող հարցերի նշանակությունը:
- Ունենա սեփական մտածելակերպի և կարողությունների նկատմամբ վստահություն:
- Գիտակցի շրջապատող աշխարհի պատահույթների և երևույթների հավանական լինելը:
- Գիտակցի մաթեմատիկայի կարևորությունը անձի հետազոտական գործունեության, ինչպես նաև ինտուիցիայի զարգացման համար:
- Գիտակցի մաթեմատիկական գիտելիքների կարևորությունը՝ հիմնավորված որոշումներ կայացնելու խնդրում:

Ուսուցման արդյունքների ստուգման և

գնահատման կարգը

1. Ուսուցման արդյունքների գնահատում կատարելու համար ստուգվում է սովորողների պատրաստվածությունը (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ) և որոշվում, թե այն ինչքանով է համապատասխանում՝ կրթական աստիճանի ավարտին՝ առարկայական չափորոշչով սովորողներին ներկայացվող պահանջներին, իսկ ուսումնառության ընթացքում՝ առարկայական ծրագրում ամփոփված չափորոշչային պահանջներին:
2. Ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման համար սովորողներին տրվում են *առաջադրանքներ*՝ հարցեր, խնդիրներ, վարժություններ, գործնական աշխատանքներ, հանձնարարություններ, որոնց միջոցով բացահայտվում են.
 - ա/ սովորողների յուրացրած գիտելիքների լրիվությունը, կայունությունը, հիմնավորությունը, խորությունը,
 - բ/ գիտելիքները պարզ, ոչ պարզ, բարդ, ծանոթ և անծանոթ իրադրություններում կիրառելու կարողություններն ու հմտությունները,
 - գ/ կատարած մտավոր գործունեությունը արտահայտելու, ներկայացնելու, շարադրելու մակարդակը, որի բացահայտման համար հաշվի են առնվում նաև թույլ տրված սխալները, անճշտությունները, թերությունները և բացթողումները:
3. Սովորողների պատրաստվածությունը բացահայտվում է հիմնականում բանավոր հարցումների և գրավոր աշխատանքների միջոցով, որոնց համար նախապես կազմվում են առաջադրանքներ և դրանց գնահատման չափանիշներ:
 - Առաջադրանքներն ըստ բարդության բնութագրվում են հետևյալ հատկանիշներով.
 - ա/ *1-ին կարգի* բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների իմացություն, պարզ և ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար չեն պահանջում ինքնատիպ (ոչ ստանդարտ) մոտեցումներ, միջնորդավորված քայլեր ու հիմնավորումներ:
 - բ) *2-րդ կարգի* բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների կայուն իմացություն, ոչ բարդ և ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ենթադրում են որոշակի հայտնի մեթոդներ, միջնորդավորված քայլեր, ոչ բարդ հիմնավորումներ և չեն պահանջում ինքնատիպ մոտեցումներ,
 - գ) *3-րդ կարգի* բարդության առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների հիմնավոր

ինացություն, բարդ, կամ ոչ լրիվ ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ենթադրում են ինքնատիպ մոտեցումներ, հատուկ մեթոդներ, միջնորդավորված քայլեր, կառուցումներ, արտածումներ, հիմնավորումներ,

դ) *դժվարավուն* առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրված ծրագրային նյութին վերաբերող չափորոշչային գիտելիքների հիմնավոր և խորը իմացություն, բարդ կամ անծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ենթադրում են բազմակողմանի վերլուծություն, ստեղծագործական մոտեցում, հատուկ մեթոդներ, օժանդակ կառուցումներ, արտածումներ, հիմնավորումներ, կռահումներ:

4. Բանավոր հարցումների գնահատման չափանիշներ կազմելու համար հաշվի են առնվում գնահատման նպատակը, առաջադրանքի տեսակը, բովանդակությունը, դրա կատարման համար գնահատվողից ակնկալվող պատրաստվածությունը և հետևյալ սանդղակը (ենթադրվում է, որ սանդղակի յուրաքանչյուր միավորը արտահայտում է տվյալ գնահատվողի ցուցաբերած պատրաստվածության առավելագույն մակարդակը, այսինքն՝ գնահատվողը սանդղակի ավելի բարձր միավորին համապատասխանող պահանջներին չի բավարարում):

1 միավոր (*«շատ վատ»*). 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար պատրաստվածություն բոլորովին չի ցուցաբերում,

2 միավոր (*«վատ»*). 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է մասնակի պատրաստվածություն և թույլ է տալիս էական սխալներ,

3 միավոր (*«անբավարար»*). 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ և բացթողումներ,

4 միավոր (*«բավարար»*). 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն (չի բացառվում, որ կարող է թույլ տալ ոչ էական թերություն կամ վրիպում, որը ուշադրության հրավիրելու դեպքում ի վիճակի է ինքնուրույն վերացնել),

5 միավոր (*«միջին»*). 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, կամ 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ և բացթողումներ,

6 միավոր (*«միջինից բարձր»*). 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն (չի բացառվում, որ կարող է թույլ տալ ոչ էական թերություն կամ վրիպում, որը ուշադրության հրավիրելու դեպքում ի վիճակի է ինքնուրույն վերացնել),

7 միավոր (*«լավ»*). 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, կամ 3-րդ կարգի բարդության առաջա-

դրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ և բացթողումներ,

8 միավոր (*«շատ լավ»*). 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն (չի բացառվում, որ կարող է թույլ տալ ոչ էական թերություն կամ վրիպում, որը ուշադրության հրավիրելու դեպքում ի վիճակի է ինքնուրույն վերացնել),

9 միավոր (*«գերազանց»*). 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, կամ դժվարավուն առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ և բացթողումներ,

10 միավոր (*«բացառիկ»*). դժվարավուն առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն (չի բացառվում, որ կարող է թույլ տալ ոչ էական թերություն կամ վրիպում, որը ուշադրության հրավիրելու դեպքում ի վիճակի է ինքնուրույն վերացնել):

5. Գրավոր աշխատանքների ստուգման և գնահատման չափանիշներ կազմելու համար հաշվի են առնվում աշխատանքի տեսակը, բովանդակությունը, կատարման նպատակը, գնահատվողից ակնկալվող պատրաստվածությունը և հետևյալ ընթացակարգը.

ա) աշխատանքում ամփոփված առաջադրանքների (կամ աշխատանքի տարբեր բաղադրիչների) համար սահմանվում են որոշակի միավորներ՝ այնպես, որ բոլոր առաջադրանքների առավելագույն միավորների գումարը չգերազանցի 10 միավորը,

բ) առաջադրանքի համար գնահատվում է սահմանված առավելագույն միավորը, եթե այն կատարված է ճիշտ, բոլոր դատողություններն ու քայլերը հիմնավոր և ավարտուն են, կատարված են անհրաժեշտ գծագրերը, և շարադրված է գրագետ,

գ) առաջադրանքի համար գնահատվում է սահմանված առավելագույն միավորից մինչև 20%-ով պակաս միավոր, եթե այն ըստ էության ճիշտ է կատարված, դատողություններն ու քայլերը հիմնավոր և ավարտուն են, սակայն շարադրանքում թույլ են տրված թերություն, վրիպում կամ բացթողում, որոնք չեն վերաբերում առաջադրանքի հիմնական բովանդակությանը,

դ) առաջադրանքի համար գնահատվում է սահմանված առավելագույն միավորից մինչև 50%-ով պակաս միավոր, եթե կատարված են հիմնական քայլերը, սակայն դրանք ավարտուն չեն, կամ շարադրանքում թույլ է տրված սխալ, որը վերաբերում է առաջադրանքի հիմնական բովանդակությանը,

ե) առաջադրանքի համար գնահատվում է սահմանված առավելագույն միավորի մինչև 30%-ը, եթե թույլ են տրված էական բացթողումներ և սխալներ, սակայն կատարված աշխատանքում առկա են ճիշտ քայլեր, որոնք վկայում են, որ գնահատվողն ունի առաջադրանքի բովանդակությանը վերաբերող անհրաժեշտ գիտելիքներ կամ կարողություններ,

զ) գրավոր աշխատանքի գնահատականը որոշվում է նրա պարունակած առաջադրանքների կատարման համար ստացված գումարային միավորով:

6. Առաջին դասարանում ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի աճի բնութագիր, որի ձևը, լրացման և սովորողի ծնողին ներկայացման կարգը սահմանում է նախարարությունը:
7. Երկրորդ դասարանից սկսած աշակերտի *ընթացիկ գնահատումը* կատարվում է տարբեր ձևի ստուգումների միջոցով: Ստուգման ձևերից յուրաքանչյուրի համար սահմանվում է գործակից, որով որոշվում է ստուգման տվյալ ձևի կշիռը կիսամյակային ընդհանուր գնահատականի մեջ:

**Ստուգման ձևերի աղյուսակ
տարրական դպրոց**

N	ստուգման ձևը	քանակը կիսամյակում	գործակիցը
1.	տնային առաջադրանք՝ խնդիր, վարժություն, հանձնարարություն	50-60	0,1
2.	համառոտ գրավոր աշխատանք (10-15 թույլ)	15-20	0,2
3.	ծավալուն գրավոր աշխատանք (30-40 թույլ)	3-4	0,1
4.	համառոտ բանավոր հարցում (1-2 թույլ)	25-40	0,2
5.	ծավալուն բանավոր հարցում (4-5 թույլ)	10-15	0,2
6.	ամփոփիչ թեստ կամ ստուգարք (35-45 թույլ)	1-2	0,2

**Ստուգման ձևերի աղյուսակ
հիմնական դպրոցի 5-6-րդ դասարաններ**

N	ստուգման ձևը	քանակը կիսամյակում	գործակիցը
1.	տնային առաջադրանք՝ խնդիր, վարժություն, հանձնարարություն	50-60	0,1

	րարություն		
2.	համառոտ գրավոր աշխատանք (10-15 թույլ)	15-20	0,1
3.	ծավալուն գրավոր աշխատանք (30-40 թույլ)	5-8	0,2
